

Երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն
Ծրագրի անվանումը՝ «Երևանի էներգաարդյունավետության 2-րդ» ծրագիր (ԵԷԱ-II)
Ֆինանսավորման աղբյուր՝ Եվրոպական ներդրումային բանկ («ԵՆԲ») և Եվրոպական
միության ֆինանսական գործիք հանդիսացող Հարևանության ներդրումային հարթակ

ԵՆԲ վարկ No.: 90.016

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

ՎԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏՆԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ

Պայմանագրի անվանումը՝ «Թիվ 3, 73, 120 մանկապարտեզների սեյսմիկ արդիականացման, էներգաարդյունավետության բարելավման և վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստում և հեղինակային հսկողության իրականացում»

Պայմանագրի համարը՝ YEPP-II/LCS/CS-25/001

Հետաքրքրվածություն հայտնելու այս հրավերը (ՀՀՀ) հետևում է սույն ծրագրի համար նախատեսված «Գնումների ընդհանուր ծանուցմանը», որը հրապարակվել է 2023 թվականի մայիսի 5-ին:

1. Հայաստանի Հանրապետությունը ֆինանսավորում է ստացել Եվրոպական ներդրումային բանկից (ԵՆԲ) և Եվրոպական միության ֆինանսական գործիք՝ Հարևանության ներդրումային հարթակից՝ Երևանի էներգաարդյունավետության 2-րդ ծրագրի ծախսերը հոգալու նպատակով, և այդ միջոցների մի մասը մտադիր է օգտագործել «Թիվ 3, 73, 120 մանկապարտեզների սեյսմիկ արդիականացման, էներգաարդյունավետության բարելավման և վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստում և հեղինակային հսկողության իրականացում» խորհրդատվական ծառայությունների պայմանագրի շրջանակներում վճարումներ կատարելու համար:

Պայմանագրի վճարումներն իրականացվելու են ԵՆԲ-ի և ՀՀ կառավարության համատեղ ֆինանսավորմամբ: Մրցութային գործընթացը ղեկավարվելու է ԵՆԲ-ի կանոններով և ընթացակարգերով («ԵՆԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերի գնումների ուղեցույց, Մարտի 2024»/«Guide to Procurement for projects financed by the EIB, March 2024»)¹, և այն բաց է բոլոր երկրներից բոլոր Մասնակիցների համար, ովքեր իրավասու են մասնակցելու շինարարական աշխատանքների, ապրանքների և ծառայությունների պայմանագրերի մրցույթներին՝ բացառությամբ ԵՆԲ-ի կողմից արգելված ընկերությունների ցանկում ընդգրկված ընկերություններից: Ի լրումն, խնդրում ենք ուշադրություն դարձնել 1.5 կետի վրա, որով սահմանվում է ԵՆԲ-ի քաղաքականությունը շահերի բախման մասով:

Խորհրդատվական ծառայությունների («Ծառայություններ») ընդհանուր նպատակներն են՝

¹ «Գնումների ուղեցույցը» հասանելի է առցանց ԵՆԲ-ի կայքում՝

<https://www.eib.org/en/publications/20240132-guide-to-procurement-for-projects-financed-by-the-eib>

Երևանի Կենտրոն վարչական շրջանում գտնվող N3, Էրեբունի վարչական շրջանում՝ N73, Նոր Նորք վարչական շրջանում՝ N120 մանկապարտեզների վերակառուցման նախագծերի մշակում/պատրաստում, ինչպես նաև՝ մանկապարտեզների վերակառուցման ընթացքում հեղինակային հսկողության իրականացում:

Ընտրված խորհրդատուն հանձնարարությունն իրականացնելու **երեք (3) փուլերով՝**

- **Փուլ I.** Թիվ 3, 73 և 120 մանկապարտեզների տարածքների երկրաբանահետախուզական աշխատանքներ, բնապահպանական պլանի (ԲՍԿՊ) կամ առանձին ԲՍԿՊ-ի, Տարաբնակեցման գործողությունների պլանի (ՏԳՊ) կամ հակիրճ ՏԳՊ-ի մշակում և էսքիզային նախագծի 2 (երկու) տարբերակի մշակում: **Փուլ I-ի տևողությունը սահմանվում է 30 (երեսուն) օրացույցային օր:**
- **Փուլ II.** Թիվ 3, 73 և 120 մանկապարտեզների ընտրված տարբերակի աշխատանքային նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում, ներառյալ՝ անհրաժեշտ փորձաքննությունների դրական եզրակացությունները: Փուլ II-ը կսկսվի Փուլ I-ի հաջող ավարտից հետո: **Փուլ II-ի տևողությունը սահմանվում է 180 (հարյուր ութսուն) օրացույցային օր:**
- **Փուլ III.** Հեղինակային հսկողություն շինարարական աշխատանքների ժամանակ:

Ակնկալվում է, որ խորհրդատվական ծառայությունները (Փուլ I և Փուլ II) կսկսվեն **2026 թվականի փետրվար** ամսին: Ծառայությունների (Փուլ I և Փուլ II) ընդհանուր տևողությունը **երկու հարյուր տաս (210) օրացույցային օր է՝** մեկնարկից սկսած: «Նախագծման աշխատանքների (Փուլ I և Փուլ II)» առաջադրանքն իրականացվելու է «Միանվագ վճարման պայմաններով» պայմանագրով (Lump-Sum Contract):

Փուլ III-ը կմեկնարկի համապատասխան շինարարական աշխատանքների հետ միասին, որի նախնական մեկնարկը սահմանված է **2027 թվականի մարտին**, և շինարարական աշխատանքների մոտավոր տևողությունը **24 (քսանչորս) ամիս է:** «Հեղինակային հսկողության» առաջադրանքի համար օգտագործվող պայմանագրի ձևաչափը կլինի «Ժամանակի վրա հիմնված վճարումներով» պայմանագիր (Time-Based Contract):

(*) Ծառայությունների վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկություն տրամադրված է սույն հրավերին/ՇՀՀ-ին կից «Տեխնիկական առաջադրանքում»:

2. Երևանի քաղաքապետարանը («Պատվիրատու»)՝ «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության («ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ՝ Պատվիրատուի գնումները իրականացնող գործակալություն) միջոցով հրավիրում է իրավասու խորհրդատվական ընկերություններին («Խորհրդատուներ»)՝ հայտնել իրենց հետաքրքրվածությունը վերը նշված ծառայությունների մատուցման համար: Սույն «Հետաքրքրություն հայտնելու հրավերը» բաց է բոլոր իրավասու խորհրդատվական ընկերությունների համար, ովքեր իրավասու են մասնակցել ծառայությունների մատուցման մրցույթներին՝ բացառությամբ ԵՆԲ-ի կողմից արգելված ընկերությունների ցանկում ընդգրկված ընկերություններից: Ի լրումն՝ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել 1.5 կետի վրա, որով սահմանվում է ԵՆԲ-ի քաղաքականությունը շահերի բախման մասով:

Շահագրգիռ խորհրդատուները պետք է ներկայացնեն տեղեկություններ (օրինակ՝ բրոշյուրներ/բուկլետ, նմանատիպ աշխատանքների նկարագրություններ, փորձ համանման աշխարհագրական պայմաններում, աշխատանքն իրականացնելու համար

տեխնիկական ռեսուրսների մատչելիություն, հիմնական աշխատակազմի ընդհանուր որակավորումներն ու թիվը (**CV-ներ այս փուլում չեն պահանջվում**) և այլն), որոնք ցույց կտան, որ իրենք ունեն պահանջվող որակավորում և համապատասխան փորձ ծառայությունները կատարելու համար:

Կարճ ցուցակում ընդգրկվելու չափանիշները/գնահատման միավորները հետևյալն են.

#	Չափանիշներ	Միավոր
(i)	Ընկերության ընդհանուր փորձառություն (Գործունեության հիմնական տեսակը և փորձը տարիներով)	20
(ii)	Ընկերության աշխատանքային փորձ տվյալ առաջադրանքի ոլորտում (բնակելի/հասարակական/ուսումնական/ արդյունաբերական կառույցների նախագծման ոլորտում փորձ վերջին 10 տարիների ընթացքում և իրականացված համանման աշխատանքների քանակը)	50
(iii)	Հիմնական անձնակազմի ընդհանուր որակավորումը և թիվը (Այս փուլում ինքնակենսագրությունները (CV) պարտադիր չեն)	20
(iv)	Ընկերության տեխնիկական և կառավարչական կարողությունները (Կառավարչական և կազմակերպչական կառուցվածք, գրասենյակային սարքավորումներ և այլն)	10

Նշում. Պատվիրատուն իրավասու է պահանջել Խորհրդատուից/Դիմորդից այնպիսի փաստաթղթեր, որոնց միջոցով կհավաստվեն ներկայացված որակավորումների և փորձի իսկությունը, ինչպիսիք են՝ իրականացված պայմանագրերի պատճեններ, վկայականներ, քաղվածքներ և այլն:

3. Տվյալ առաջադրանքի համար Խորհրդատուները կարող են միավորվել այլ ընկերությունների հետ համատեղ ձեռնարկությամբ (ՀՁ) կամ ենթախորհրդատվության ձևով՝ իրենց որակավորումներն ուժեղացնելու նպատակով (խնդրում ենք հստակ նշել միավորման կարգավիճակը, օրինակ՝ Համատեղ ձեռնարկություն կամ ենթախորհրդատու): Համատեղ ձեռնարկությունում մասնակիցների առավելագույն թիվը պետք է լինի՝ **3 (երեք)**: Պայմանագրի շնորհման դեպքում ՀՁ-ի բոլոր անդամները համապարտ պատասխանատվություն են կրում Պատվիրատուի առջև Պայմանագրի բոլոր պարտավորությունների համար:

Եթե Խորհրդատուն (ներառյալ՝ ՀՁ ցանկացած անդամ) ներկայացնում կամ մասնակցում է մեկից ավելի հայտերում (հետաքրքրվածության հայտ), ապա բոլոր հայտերը կմերժվեն: Այնուամենայնիվ, նույն ենթախորհրդատուն կարող է մասնակցել մի քանի հայտերում:

Եթե Խորհրդատուն համատեղ ձեռնարկություն (ՀՁ) է, հետաքրքրության հայտը պետք է ներառի՝

- ՀՁ-ի բոլոր անդամների շահերը ներկայացնելու համար ՀՁ-ի առաջատար անդամի ներկայացուցչի լիազորագիր; և
- Գոյություն ունեցող ՀՁ պայմանագրի պատճենը; կամ
- ՀՁ կազմելու «մտադրության նամակ» պատճենը՝ ստորագրված բոլոր անդամների կողմից:

Այս փաստաթղթի(-երի) բացակայության դեպքում մյուս մասնակիցները կդիտարկվեն

որպես ենթախորհրդատուներ: Ենթախորհրդատուների փորձը և որակավորումը հաշվի չեն առնվում հայտերի գնահատման ժամանակ:

Ներկայացված հայտերի հիման վրա Պատվիրատուն կկազմի առավելագույնը **6 (վեց)** Հայտատուներից բաղկացած կարճ ցուցակ, որոնց հետագայում կտրամադրվի «Առաջարկներ ներկայացնելու հրավերը (ԱՆՀ)» ծառայությունների մատուցման համար:

Խորհրդատուն ընտրվելու է «**Նվազագույն գնով ընտրություն (ՆԳԸ)/Least-Cost Selection (LCS)**» ընթացակարգի համաձայն:

4. Շահագրգիռ հայտատուները լրացուցիչ տեղեկություններ կարող են ստանալ ստորև նշված հասցեով՝ երկուշաբթի - ուրբաթ աշխատանքային ժամերին՝ **Ժ. 10:00–17:00 (Երևանի ժամանակով)**, բացի պաշտոնական տոներից (կոնտակտային անձ՝ տկն. Մերի Հայրապետյան – «ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ, Հանրային շենքերի ծրագրերի ղեկավար; էլեկտրոնային փոստ՝ meri.hayrapetyan@yerevan.am):

5. Հետաքրքրվածության հայտը՝ ուղեկցող գրությամբ, պետք է ներկայացվի **անգլերեն կամ հայերեն**՝ ստորև նշված հասցեով՝ **1 (մեկ) տպագիր վավերացված օրինակ, 1 (մեկ) էլեկտրոնային տարբերակ (CD սկավառակով կամ USB կրիչով)** կամ էլեկտրոնային փոստով՝ Adobe PDF ձևաչափով ստորև նշված հասցեով՝ **2025 թվականի օգոստոսի 20-ից ոչ ուշ, և պետք է հստակ վերնագրվի** որպես՝ «Հետաքրքրվածություն հայտնելու հայտ «Թիվ 3, 73, 120 մանկապարտեզների սեյսմիկ արդիականացման, էներգաարդյունավետության բարելավման և վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստում և հեղինակային հսկողության իրականացում» (ծածկագիր#YEPP-II/LCS/CS-25/001) պայմանագրի համար»:

6. Մրցույթի մասնակիցը պետք է հոգա իր Հայտի (Հետաքրքրվածության հայտ) նախապատրաստման և ներկայացման հետ կապված բոլոր ծախսերը: Պատվիրատուն որևէ պատասխանատվություն չի կրում այդ ծախսերի համար՝ անկախ մրցութային գործընթացի ընթացքից կամ արդյունքից:

7. Վերը նշված հասցեն է՝

«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն («ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ)

Ում՝ Մարտին Չարյան, «ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի գնումների մասնագետ

Հասցե՝ Փ. Բուզանդի 1/3

Հարկ/Սենյակ՝ 6-րդ հարկ, 618 սենյակ

Քաղաք՝ Երևան

Փոստային դասիչ՝ 0010

Երկիր՝ Հայաստանի Հանրապետություն

Հեռախոս՝ (+374 11) 51-50-07 (ընդունարան)

Էլ. փոստի հասցե՝ martin.charyan@yerevan.am; պատճեն՝ meri.hayrapetyan@yerevan.am; narek.melkumyan@yerevan.am

Հետաքրքրության հայտը պետք է ներառի հետևյալը.

- «ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի տնօրենին ուղղված «Հետաքրքրության հայտի դիմում-նամակ»²,
- Լիազորագիր՝ Հետաքրքրվածության Հայտը ստորագրող անձի համար,
- Ընկերության ընդհանուր աշխատանքային փորձի վերաբերյալ տեղեկատվություն,
- Վերջին 10 (տաս) տարիների ընթացքում իրականացրած համանման պայմանագրերի (պայմանագրերի քանակ) վերաբերյալ տեղեկատվություն (պետք է տրամադրվի «EXP-Հատուկ փորձ» ձևաչափով)²,
- Հիմնական աշխատակազմի ընդհանուր որակավորման, քանակի (***CV-ներ այս փուլում չեն պահանջվում***) և ընկերության տարածաշրջանային փորձի վերաբերյալ տեղեկատվություն,
- Գոյություն ունեցող ՀՁ պայմանագրի պատճենը կամ ՀՁ կազմելու «մտադրության նամակի» պատճենը (ՀՁ-ի դեպքում)՝ ստորագրված բոլոր անդամների կողմից (*այս փաստաթղթի բացակայության դեպքում մյուս մասնակիցները կդիտարկվեն որպես ենթախորհրդարարություններ*):

² Այս փաստաթղթերը կցվում են սույն Շահագրգռվածություն հայտնելու հրավերին (տե՛ս ստորև էջերը):

Նշում. [...] -ում շեղարառ գրված ամբողջ տեքստը նախատեսված է այս ձևը պատրաստելու համար և պետք է ջնջվի վերջնական արդյունքից:

Հետաքրքրության հայտի դիմում-նամակ

2025 թ. ----, ----- **[նշել ամսաթիվը]**

Ում՝ «ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի (Պատվիրատուի գնումներն իրականացնող գործակալություն) տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ տիկին Անետա Բաբայանին

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0010, Փ. Բուզանդի 1/3

Հարգելի՛ տիկնայք/պարոնայք,

«.....» (ծածկագիր#) **[նշել մրցույթի/պայմանագրի անվանումը և համարը]** խորհրդատվական ծառայությունների մատուցման մրցույթի վերաբերյալ 2025 թվականի **[լրացնել հրապարակման ամսաթիվը]** հրապարակված «Հետաքրքրվածության հայտ ներկայացնելու հրավերին» (ՇՀՆՀ) ի պատասխան՝ ես, որպես **[լրացնել Ձեր կազմակերպության/ընկերության կամ համատեղ ձեռնարկության կազմում հանդես եկող այլ ընկերության անվանումը]** լիազորված ներկայացուցիչ, հայտնում եմ մեր կազմակերպության/ընկերության **[կամ համատեղ ձեռնարկության]** հետաքրքրությունը՝ ստանձնելու վերոնշյալ ծրագրի իրականացումը՝ ՇՀՆՀ-ի և կից ներկայացվող Առաջադրանքի պայմաններին (ԱՊ) համապատասխան:

Ձեր ուշադրությանն եմ ներկայացնում պահանջվող տեղեկություններն ու փաստաթղթերը՝ կցված համապատասխան ձևաչափով:

Հաստատում եմ, որ տրամադրված տեղեկությունն ամբողջական է և ճշգրիտ, և գիտակցում եմ, որ պատվիրատու կազմակերպությունը հայտերը ստուգելու և հաստատելու նպատակով իրավունք ունի պահանջել ցանկացած առկա հիմնավորող փաստաթուղթ:

Մենք գիտակցում ենք, որ Ձեր ընկերությունը պարտավոր չէ ընդունել ստացված ցանկացած հայտ:

Հարգանքով,

Ստորագրություն՝ _____

Ստորագրողի անունը և պաշտոնը՝ _____

Ծանոթություն. պետք է ստորագրված լինի կազմակերպության ընկերության լիազորված ներկայացուցչի կամ ՀՀ-ի առաջատար կազմակերպության ընկերության կողմից (յուրաքանչյուր անդամի կողմից լիազորված)

Նշում. [...] -ում շեղարառ գրված ամբողջ տեքստը նախատեսված է այս ձևը պատրաստելու համար և պետք է ջնջվի վերջնական արդյունքից:

Ձևաչափ EXP- Հատուկ փորձ

[Հետևյալ աղյուսակը լրացվում է Դիմորդի և համատեղ ձեռնարկության յուրաքանչյուր անդամի կողմից կատարված պայմանագրերի համար: Յուրաքանչյուր պայմանագրի համար լրացվում է առանձին աղյուսակ]

Հայտատուի անվանում՝[լրացնել լրիվ անվանումը]

Ամսաթիվ՝ [լրացնել օրը, ամիսը, տարին]

Համատեղ ձեռնարկության անդամի անվանում՝[լրացնել լրիվ անվանումը]

ՀՀՆՀ համար և անվանում՝[լրացնել ՀՀՆՀ համարը և անվանումը]

Էջ[լրացնել էջի համարը]՝[լրացնել էջերի ընդհանուր թիվը]-ից

Նմանատիպ պայմանագրի համար [նշել հերթական համարը]	Տվյալներ			
Պայմանագրի անվանումը և համարը	[լրացնել պայմանագրի անվանումը և համարը՝ կիրառելի լինելու դեպքում]			
Պայմանագրի շնորհման ամսաթիվ	[լրացնել օրը, ամիսը, տարին, օրինակ՝ 15 հունիսի, 2018 թ.]			
Ավարտման ամսաթիվ	[լրացնել օրը, ամիսը, տարին, օրինակ՝ 20 հոկտեմբերի, 2021թ.]			
Պայմանագրի սկզբնական ժամկետ				
Պայմանագրի ավարտի հետաձգման դեպքում նշել խորհրդատուի պարտականությունների չկատարման հետևանքով հետաձգման ժամանակահատվածը, հետաձգման պատճառը	Ֆորս մաժորային իրավիճակ	Պայմանագրով հիմնավորված ժամկետի երկարաձգում	Խորհրդատուի պարտականությունների չկատարում	Այլ
Պայմանագրի հետաձգման պատճառով համապատասխան ժամանակահատված (ամիս)				
Պաշտոնը պայմանագրի շրջանակում [նշել համապատասխան վանդակը]	Գլխավոր խորհրդատու ☐	ՀՁ անդամ ☐	Կառավարման խորհրդատու ☐	Ենթախորհրդատու ☐

Նմանատիպ պայմանագրի համար <i>[նշել հերթական համարը]</i>	Տվյալներ		
Պայմանագրի ընդհանուր գումարը	<i>[նշել պայմանագրի ընդհանուր գումարը եվրոյով, ԱՄՆ դոլարով կամ տեղական արժույթով (ՀՀ դրամ)]</i>		<i>[նշել փոխարժեքը և պայմանագրի ընդհանուր գումարը համարժեք եվրո/ԱՄՆ դոլար, եթե պայմանագիրը կնքված է տեղական արժույթով (ՀՀ դրամ)]</i>
ՀՁ անդամ կամ ենթախորհրդատու լինելու դեպքում նշել մասնաբաժինը Պայմանագրի ընդհանուր գումարում և պաշտոնի անվանումն ու պարտականությունները	<i>[լրացնել տոկոսը]</i>	<i>[նշել պայմանագրի ընդհանուր գումարը եվրոյով, ԱՄՆ դոլարով կամ տեղական արժույթով (ՀՀ դրամով)]</i>	<i>[նշել փոխարժեքը և պայմանագրի ընդհանուր գումարը համարժեք եվրո/ԱՄՆ դոլար, եթե պայմանագիրը կնքված է տեղական արժույթով (ՀՀ դրամով)]</i>
		<i>[լրացնել պաշտոնի անվանումն ու պարտականությունները]</i>	
Նմանության նկարագրություն՝ համաձայն Առաջադրանքի պայմանների դրույթների			
Բարդություն	<i>[լրացնել բարդության նկարագրությունը]</i>		
Մեթոդներ/տեխնոլոգիա	<i>[լրացնել պայմանագրում ներգրավված մեթոդների/տեխնոլոգիաների առանձնահատկությունները]</i>		
Այլ բնութագրեր	<i>[նկարագրել այլ բնութագրեր]</i>		
Պատվիրատուն	<i>[լրացնել լրիվ անվանումը]</i>		
Հասցե	<i>[լրացնել փողոցը / շենքի համարը / քաղաքը կամ բնակավայրը / երկիրը]</i>		
Հեռախոսի համար	<i>[լրացնել հեռախոսի համարները, ներառյալ՝ երկրի և քաղաքի կոդերը]</i>		
Էլ. փոստ	<i>[լրացնել էլեկտրոնային փոստի հասցեն՝ առկայության դեպքում]</i>		

Նշում. Հանձնարարության ոլորտում ներկայացված աշխատանքները պետք է լինեն հաջողությամբ ավարտված: Պատվիրատուն իրավունք ունի խորհրդարարից/Դիմորդից պահանջել իր կողմից ներկայացված որակավորկավորման և փորձառության իսկությունը ապացուցող փաստաթղթեր, օրինակ՝ իրականացված պայմանագրերի պատճեններ, տեղեկանքներ, քաղվածքներ, վկայականներ և այլն

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ (ՏԱ)

«Թիվ 3, 73, 120 մանկապարտեզների սեյսմիկ արդիականացման, էներգաարդյունավետության բարելավման և վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստում և հեղինակային հսկողության իրականացում» Խորհրդատվական Ծառայություններ համար (Ընկերությունների ընտրություն)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի մայրաքաղաք Երևանը, որտեղ բնակվում է երկրի բնակչության մեկ երրորդից ավելին, ռազմավարական և ինստիտուցիոնալ հանձնառություններ է ստանձնել կայուն էներգետիկայի զարգացման, էներգաարդյունավետության (ԷԱ) և կլիմայական պայմաններին դիմակայունության ուղղությամբ: Որպես երկրի ամենամեծ քաղաքային կենտրոն և տնտեսական կենտրոն՝ Երևանը կարևոր դեր է խաղում Հայաստանի էներգետիկ և բնապահպանական քաղաքականության ավելի լայն դաշտում:

1.1. Ռազմավարական շրջանակ և քաղաքականության պարտավորություններ

Երևանն ընդունել է մի քանի ռազմավարական ծրագրեր, որոնք սահմանում են իր էներգետիկ և կլիմայական առաջնահերթությունները.

- **«Երևան կանաչ քաղաքի գործողությունների ծրագիր» (GCAP) (2020):** Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) աջակցությամբ մշակված GCAP-ը սահմանում է առաջնահերթ ոլորտներ՝ ներառյալ էներգետիկան, շենքերը, թափոնները և տրանսպորտը՝ նպատակային միջոցառումներով, որոնք ուղղված են շրջակա միջավայրի կատարողականի բարելավմանը և արտանետումների կրճատմանը: Ծրագիրը շեշտը դնում է հանրային շենքերի վերանորոգման, վերականգնվող էներգիայի օգտագործման խթանման, հասարակական տրանսպորտի բարելավման և էներգախնայողության կանոնակարգերի ներդրման վրա:
- **Երևան քաղաքի կայուն էներգիայի գործողությունների ծրագիր (ԿԷԳԾ) (2010):** ԵՄ «Քաղաքապետերի դաշնագիր» նախաձեռնությանը համապատասխան, այս ծրագիրը ուրվագծեց ջերմոցային գազերի (ԶԳ) արտանետումների 20%-ով կրճատման հասնելու ճանապարհային քարտեզ: Այն շենքերի, փողոցային լուսավորության և քաղաքային ծառայությունների էներգաարդյունավետության բարելավումները սահմանեց որպես հիմնական ռազմավարություններ՝ տեղական և միջազգային գործընկերների աջակցությամբ:
- **Կայուն էներգիայի և կլիմայի գործողությունների ծրագիր (SEDCAP) (թարմացված 2025թ.):** Կլիմայի և էներգետիկայի քաղաքապետերի դաշնագրի շրջանակներում Երևանի կողմից նորացված պարտավորությունից հետո քաղաքը սահմանեց ավելի հավակնոտ նպատակ՝ **մինչև 2030 թվականը ջերմոցային գազերի 30%-ով կրճատում**, ինչպես նաև **կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականության** միջոցառումներ: SEDCAP-ը արտացոլում է ինտեգրված մոտեցում, որը վերաբերում է ինչպես մեղմացմանը, այնպես էլ դիմակայունությանը, ներառյալ թարմացված բազային արտանետումների գույքագրումները և ոլորտային վերլուծությունները:

Փաստաթղթերը մշակվել են մասնակցային գործընթացով՝ ներգրավելով շահագրգիռ կողմերին, փորձագիտական վերանայումների և հանրային խորհրդակցությունների միջոցով՝ ապահովելով ինչպես տեղական իրականությանը, այնպես էլ միջազգային կլիմայական և էներգետիկ շրջանակներին համապատասխանությունը:

Երևանը զգալի տեխնիկական և ֆինանսական աջակցություն է ստացել Եվրոպական ներդրումային բանկից (ԵՆԲ), ՄԱԿ-ի զարգացման ծրագրից, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկից (ՎԶԵԲ), ԵՄ հարևանության ներդրումային հարթակից և Արևելյան Եվրոպայի էներգաարդյունավետության և շրջակա միջավայրի գործընկերությունից (E5P):

1.2. Հիմնական էներգաարդյունավետության նախագծեր

Հանրային շենքերում էներգաարդյունավետությունը մնում է Երևանում միջամտության ամենաբարձր ազդեցություն ունեցող ոլորտներից մեկը:

- «Երևանի էներգաարդյունավետության ծրագիր» (2017–ընթացիկ). Կենտրոնացած է մանկապարտեզների վերանորոգման վրա՝ շենքերի պատերի ջերմամեկուսացման, ջեռուցման համակարգերի արդիականացման և էներգաարդյունավետ լուսավորության միջոցով:
- «Երևանի էներգաարդյունավետության II ծրագիր» (2024–ընթացիկ). Եվրոպական ներդրումային բանկի կողմից տրամադրված 25 միլիոն եվրո վարկի, ԵՄ հարևանության ներդրումային հարթակի կողմից տրամադրված 10.1 միլիոն եվրո դրամաշնորհի և Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված 2 միլիոն եվրո համաֆինանսավորման աջակցությամբ այս նախագիծը ընդլայնում է նախկինում ձեռնարկված ջանքերը՝ ընդգրկելով լրացուցիչ հանրային շենքեր, այդ թվում՝ մանկապարտեզներ և պոլիկլինիկաներ: Ակնկալվում է, որ այն զգալիորեն կնվազեցնի էներգիայի սպառումը և ջերմոցային գազերի արտանետումները, միաժամանակ բարելավելով ներքին հարմարավետությունն ու առողջապահական չափանիշները:

Երևանը տարածաշրջանում առանձնանում է էներգաարդյունավետության և կլիմայական գործողությունների նկատմամբ իր կառուցվածքային, բազմաշերտ մոտեցմամբ: Քաղաքի երկարաժամկետ պլանավորման (SEDCAP, GCAP) ինտեգրումը, ինստիտուցիոնալ հանձնառությունները և հասանելիությունը միջազգային ֆինանսական մեխանիզմներին այն դիրքավորում են որպես Արևելյան Եվրոպայում և Կովկասում քաղաքային կայուն էներգետիկ փոխակերպման մոդել: Շարունակական ուշադրությունն իրագործման, պետական-մասնավոր գործընկերության և մոնիթորինգի վրա կարևոր կլինի 2030 թվականի կլիմայական և էներգետիկ նպատակներին հասնելու համար:

1.3. Խորհրդատուի ընտրություն մանրամասն նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստման, ինչպես նաև հեղինակային վերահսկողության իրականացման համար:

«Երևանի էներգաարդյունավետության II» ծրագիր

Երևանի էներգաարդյունավետություն II ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել **Երևանի 32 մանկապարտեզների և 6 պոլիկլինիկաների** էներգաարդյունավետ վերանորոգման (կամ բարելավման) և սեյսմիկ արդիականացման աշխատանքներ՝ համապատասխանեցնելով դրանց տեխնիկական վիճակը հետևյալ

չափորոշիչներին և պահանջներին՝

- ՀՀՀՆ 20.04 – «Երկրաշարժադիմացկուն շինարարություն: Նախագծային նորմեր»
- ՀՀՀՆ 24.02.2022 – «Շենքերի էներգաարդյունավետության ապահովում. էներգաարդյունավետության գնահատման ցուցանիշներ»
- ՀՀ կառավարության 2014 թ. դեկտեմբերի 25-ի թիվ 1504-Ն որոշում՝ «Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին»
- Շենքերի էներգաարդյունավետության բարելավման միջազգային լավագույն փորձը:
- Մանկապարտեզների նախագծերը պետք է անցնեն տեղական փորձաքննություն (ՀՀ օրենսդրությանը համապատասխան) և ստանան ծրագրի կողմից ֆինանսավորվող միջազգային փորձագետների հաստատումը:

Այս ծրագրին հատկացված միջոցների մի մասը նախատեսված է մանրամասն տեխնիկական նախագծի (այսուհետ՝ նախագծում) և նախահաշվի փաստաթղթերի պատրաստման հետ կապված ծառայությունների գնման, ինչպես նաև շինարարության փուլում հեղինակային վերահսկողության համար:

Վերոնշյալ մանկապարտեզների և պոլիկլինիկաների վերակառուցման ընթացքում նախագծային փաստաթղթերի պատրաստման և հեղինակային հսկողության իրականացման համար կընտրվի մասնագիտացված խորհրդատվական ընկերություն (այսուհետ՝ «խորհրդատու»):

Կառուցված/վերակառուցված շենքերի պատշաճ նախագծումն ու հսկողությունն ապահովելու համար ֆինանսական միջոցներ կհատկացվեն նախագծային և նախահաշվային փաստաթղթերի պատրաստման, ինչպես նաև շինարարական աշխատանքների ընթացքում հեղինակային հսկողության իրականացման համար:

Ընտրված խորհրդատուի հետ կկնքվեն երկու առանձին պայմանագրեր՝

- Նախագծային աշխատանքների համար (I և II փուլեր)՝ Միանվագ վճարման պայմաններով պայմանագիր:
- Հեղինակային հսկողության համար (III փուլ)՝ ժամանակի վրա հիմնված պայմանագիր:

Նախագծային ծառայությունները պետք է ավարտվեն **երկու հարյուր տասը (210) օրացուցային օրվա ընթացքում**, մինչդեռ հեղինակային վերահսկողությունը կիրականացվի շինարարական աշխատանքներին զուգահեռ մինչև դրանց ավարտը:

Մասնագիտացված խորհրդատուի ընտրությունը կիրականացվի մրցութային գործընթացով՝ համաձայն Եվրոպական ներդրումային բանկի կանոնների և ընթացակարգերի (**«ԵՆԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերի գնումների ուղեցույց, Մարտ 2024»/«Guide to Procurement for projects financed by the EIB, March 2024»**):

Երևանի քաղաքապետարանը (այսուհետ՝ «Պատվիրատու»)՝ **«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ»**

¹«Գնումների ուղեցույցը» հասանելի է ԵՆԲ կայքում

<https://www.eib.org/en/publications/20240132-guide-to-procurement-for-projects-financed-by-the-eib>

համայնքային ոչ առևտրային կազմակերպություն («ԵԿՆ ԾԻԳ ՀՈԱԿ») միջոցով կիրառարակի Հետաքրքրվածություն Հայտնելու Հրավեր (ՇՀՀ) ընտրելու խորհրդատու՝ այս առաջադրանքը կատարելու համար: **Մրցույթը կանցկացվի «Նվազագույն գնով ընտրություն (ՆԳԸ/LCS)» ընթացակարգով:**

2. Տեխնիկական առաջադրանքի նպատակները

Այս տեխնիկական առաջադրանքը (ՏԱ) ուրվագծում է խորհրդատվական ծառայությունների մատուցումը Պատվիրատուի և Խորհրդատուի միջև կնքված պայմանագրի շրջանակներում: Այս ՏԱ-ի նպատակն է պատրաստել նախագծա-նախահաշվային փաստաթղթեր Կենտրոն վարչական շրջանի թիվ 3 մանկապարտեզի, Էրեբունի վարչական շրջանի թիվ 73 մանկապարտեզի և Նոր Նորք վարչական շրջանի թիվ 120 մանկապարտեզի էներգաարդյունավետության բարելավման, ինչպես նաև սեյսմիկ արդիականացման համար: Բացի այդ, Խորհրդատուից ակնկալվում է պատրաստել Շրջակա միջավայրի և սոցիալական կառավարման պլաններ (ՇՍԿՊ), Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) զեկույցներ և մոնիթորինգի պլաններ (ՄՊ) կամ տեղանքին բնորոշ ՇՍԿՊ-ներ՝ ՏԱ-ներով, ինչպես նաև իրականացնել հեղինակային հսկողություն շինարարության փուլում: Նախագծումը պետք է հիմնված լինի տեղում կատարված հետազոտությունների և Պատվիրատուի կողմից տրամադրվող ավարտված էներգետիկ աուդիտի, երկրաբանական հետազոտությունների, շենքի տեխնիկական վիճակի և սեյսմիկ խոցելիության գնահատման, շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատման վրա՝ միաժամանակ ապահովելով շենքերի էներգաարդյունավետության բարելավման և սեյսմիկ արդիականացման վերաբերյալ միջազգային և ազգային լավագույն փորձի և շինարարական նորմերի կիրառումը: Առաջարկվող լուծումների ծախսարդյունավետությունը պարտադիր է: Պատվիրատուն Խորհրդատուին կտրամադրի Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակը (ԲՍԿՇ) և համապատասխան փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները՝ որպես ՇՄԱԳ հաշվետվությունների կամ տեղանքին հատուկ ԲՍԿՇ-ների պատրաստման ուղեցույց նյութեր:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՍԿՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

3.1. Նկարագրություն

Կտրամադրվի մանկապարտեզի սեյսմիկ խոցելիության գնահատման զեկույցը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր:

Ստորև ներկայացված են մանկապարտեզների հասցեները՝ անհրաժեշտ տեղեկատվության հետ միասին:

#	Մանկա-պարտեզ	Գտնվելու վայրը	Հիմնադրման ամսաթիվ	Ընթացիկ խմբեր/երեխաներ	Հողատա-րածք (հա)
1.	3	Կենտրոն վ/2 Վրացյան փող. 80	1988թ.	7/183	0.246996
2.	73	Էրեբունի վ/2 Խաղաղ Դոնի փող., 1	1980թ.	11/330	0.875851

3.	120	Նոր Նորք վ/2 Վիլնյուսի փող. 27/1	1989թ.	9/247	0.75658
----	-----	-------------------------------------	--------	-------	---------

3.2. Աշխատանքի նկարագրության շրջանակը

Այս տեխնիկական առաջադրանքի նպատակն է հնարավորինս մանրամասն ուրվագծել աշխատանքի շրջանակը և առաջադրանքները: Այնուամենայնիվ, խորհրդատուն պետք է նկատի ունենա, որ այս տեխնիկական առաջադրանքում սահմանված առաջադրանքների ցանկը չպետք է համարվի վերջնական և սպառիչ, հետևաբար, խորհրդատուի պարտականությունն է քննադատաբար ստուգել աշխատանքի և ծառայությունների շրջանակը և համապատասխանաբար ընդլայնել, կրճատել կամ փոփոխել դրանք՝ խորհրդակցելով Պատվիրատուի հետ, որտեղ դա անհրաժեշտ է համարում, հիմնվելով մասնագիտական դատողության և գիտելիքների վրա: Խորհրդատուից ակնկալվում է կատարել բոլոր անհրաժեշտ առաջադրանքները՝ նախագծի նպատակներին հասնելու համար:

Խորհրդատուն պետք է հաշվի առնի հետևյալ սահմանափակումներն ու ենթադրությունները, որտեղ դա կիրառելի է :

A. Նախատեսված հզորություն մեկ մանկապարտեզի համար

#	Մանկապարտեզ	Նախատեսված խմբեր/երեխաներ
1	3	9/270
2	73	11/330
3	120	12/360

Նշում. մսուր-մանկապարտեզի յուրաքանչյուր խմբում պետք է տեղավորվի մինչև 30 երեխա:

- B. Շենքերի նախագծային մակերեսները պետք է նախատեսվեն՝ հիմք ընդունելով ՀՀ առողջապահության նախարարի 2024 թվականի փետրվարի 12 թիվ 50-Ն հրամանով հաստատված «Նախադպրոցական ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ» 2.1.2.001-24 սանիտարական կանոններ և հիգիենիկ նորմատիվներ»-ի, ՀՀԾՆ 31-03.04-2022 «Նախադպրոցական հաստատությունների շենքեր. Նախագծման նորմեր»-ի և ՀՀԾՆ 31-03-«Հասարակական շենքեր եվ շինություններ» -ի պահանջները:
- C. Մանկապարտեզների նախագծերը պետք է մշակվեն հեղինակի կողմից ներկայացված (և Պատվիրատուի կողմից հաստատված) իր տեխնիկական առաջարկի շրջանակներում ներկայացված էսքիզային նախագծին համապատասխան:
- D. Մանկապարտեզները պետք է նախագծվեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված բոլոր պահանջներին լիովին համապատասխան:
- E. Մանկապարտեզների հարկայնությունը, պահանջվող խմբասենյակների քանակը և այլ հարակից սենքերը պետք է նախատեսվեն այս բաժնի «ա» կետում սահմանված պահանջվող հզորությանը (խմբեր/երեխաներ) համապատասխան: Յուրաքանչյուր երեխայի համար հատկացված մակերեսը պետք է համապատասխանի ազգային նորմերին՝ հաշվի առնելով տարածքի եզակի առանձնահատկությունները :

- F. Առաջարկվող տեխնիկական լուծումներում պետք է ներառվեն էներգաարդյունավետությունը բարելավող և ջրի արդյունավետ օգտագործումը ապահովող միջոցառումներ, ներառյալ, բայց չսահմանափակվելով դրանով, շենքի պատերի ջերմամեկուսացումը, էներգաարդյունավետ ջեռուցման, օդափոխության և լուսավորության համակարգերի կիրառումը, որոնք հագեցած են համապատասխան կառավարման համակարգերով: Էներգաարդյունավետության միջոցառումները պետք է կամ խստորեն համապատասխանեն էներգետիկ աուդիտի հաշվետվություններում (EAR) նշված առաջարկություններին, կամ ցանկացած շեղում պետք է հստակորեն հիմնավորված լինի՝ հիմնավորելով տեխնիկական և տնտեսական հիմնավորումները : Առաջարկվող լուծումները պետք է հաշվի առնեն նոր ներդրված համակարգերի փոխգործունակությունը առկա համակարգերի հետ (եթե այդպիսիք կան): Բոլոր առաջարկվող միջոցառումները պետք է համապատասխանեն այս Տեխնիկական առաջադրանքին կից հավելվածներում սահմանված տեխնիկական պահանջներին:
- G. Շենքի կյանքի ցիկլի շրջակա միջավայրի վրա ազդեցությունը նվազագույնի հասցնելու համար պետք է առաջնահերթություն տրվի ցածր ածխածնային պարունակությամբ շինանյութերին: Շինանյութերը պետք է նվազագույն ազդեցություն ունենան շահառուների առողջության և անվտանգության վրա և միևնույն ժամանակ ապահովեն շենքերում հարմարավետությունը:
- H. Մանկապարտեզները պետք է հագեցած լինեն արևային ջրատաքացման համակարգ(ներ)ով:
- I. Մանկապարտեզները պետք է հագեցած լինեն տանիքի վրա տեղադրված արևային ֆոտովոլտային (ՖՎ) համակարգով: Արևային ՖՎ համակարգի հզորությունը պետք է սահմանվի տարեկան էլեկտրաէներգիայի սպառման (որը պետք է փոփոխվի՝ հաշվի առնելով ներդրված էներգաարդյունավետության միջոցառումների շնորհիվ էլեկտրաէներգիայի սպառման խնայողությունները) և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» (ՀԷՑ) ՓԲԸ-ի կողմից սահմանված ցանցային ինտեգրման հզորության հիման վրա: Նախագծողը պետք է նաև մոդելավորի ամսական և տարեկան էներգետիկ կատարողականը և տրամադրի էներգիայի արտադրողականության տվյալներ՝ օգտագործելով լիցենզավորված մոդելավորման ծրագիր:
- J. Մանկապարտեզների կրող կոնստրուկցիաները, միջհարկային սալերը և տանիքի սալերը պատրաստված են մոնոլիտ երկաթբետոնից, մինչդեռ տանիքի կրող տարրերը կարող են լինել մետաղական կամ փայտե:
- K. Տիպային նախագծային լուծումները կարող են կրկնօրինակվել և օգտագործվել նաև այլ մանկապարտեզների համար նախագծային փաստաթղթերի պատրաստման համար:
- L. Լուսավորության ուսումնասիրությունը պետք է իրականացվի՝ օգտագործելով համապատասխան թվային գործիքներ և համապատասխանի լուսավորության ստանդարտներին, ինչպիսին է EN 12464-ը, ինչպես նշված է տեխնիկական բնութագրերում:

3.3. Ազգային և տեղական օրենսդրություն և նախագծման և նախահաշվի փաստաթղթերի համար անհրաժեշտ թույլտվություններ

Ծրագրի գործունեության համար կիրառելի իրավական շրջանակը սահմանում են

Հայաստանի Հանրապետության հետևյալ օրենքները.

– **Հողային օրենսգիրք (2001, վերջին անգամ փոփոխված՝ 2022 թվականին)**

Հողային օրենսգիրքը սահմանում է պետական սեփականության ներքո գտնվող հողերի կառավարման և օգտագործման հիմնական ուղղությունները, այդ թվում՝ տարբեր նպատակներով, ինչպիսիք են գյուղատնտեսությունը, քաղաքաշինությունը, արդյունաբերությունը և հանքարդյունաբերությունը, էներգիայի արտադրությունը, կապի գծերը, տրանսպորտը և այլ նպատակներով հատկացվածները: Օրենսգիրքը սահմանում է հատուկ պահպանվող տարածքները, ինչպես նաև անտառապատ, ջրածածկ և պահպանվող հողերը: Այն նաև սահմանում է հողերի պաշտպանության միջոցառումները և նշում պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների հողերի նկատմամբ իրավունքները: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ցանկացած տեսակի ժամանակավոր կամ մշտական հողամաս կձեռք բերվի Հողային օրենսգրքի համաձայն:

– **Աշխատանքային օրենսգիրք (2004թ., վերջին անգամ փոփոխված՝ 2023թ.)**

Աշխատանքային օրենսգիրքը կարգավորում է կոլեկտիվ և անհատական աշխատանքային հարաբերությունները, սահմանում է այդ հարաբերությունների ձևավորման, փոփոխման և դադարեցման սկզբունքները և սահմանում դրանց իրականացման ընթացակարգերը: Այն նաև սահմանում է աշխատանքային հարաբերություններում ներգրավված կողմերի իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը, ինչպես նաև աշխատողների անվտանգության և առողջության ապահովման պայմանները: Աշխատանքային օրենսգրքի բոլոր դրույթները կկիրառվեն նախագծի անձնակազմի, ինչպես նաև նախագծի տարբեր փուլերում ներգրավված կապալառուների, ենթակապալառուների և խորհրդատուների անձնակազմի վրա:

– **«Մթնոլորտային օդի պաշտպանության մասին» օրենք (1994թ., վերջին անգամ փոփոխվել է 2022թ.)**

Այս օրենքի նպատակն է ապահովել մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ օդի որակ՝ այն պաշտպանելով աղտոտումից (թե՛ բնական, թե՛ մարդածին), վերացնելով և կանխելով մթնոլորտային օդի, կլիմայի և կենսաբազմազանության վրա բացասական ազդեցությունները: Օրենքը նաև կարգավորում է օդի պաշտպանության ոլորտում հասարակայնության հետ կապերը, կանխում և նվազեցնում է մթնոլորտի վրա վնասակար քիմիական և կենսաբանական ազդեցությունը, վերացնում է օդի աղտոտման անդառնալի հետևանքները, ինչպես նաև ապահովում է օդի աղտոտման վերաբերյալ տեղեկատվության ամբողջականությունն ու մատչելիությունը: Այս օրենքը նաև կարգավորում է արտանետումների լիցենզիաները և սահմանում մթնոլորտային օդի աղտոտման առավելագույն թույլատրելի կոնցենտրացիաները, ի թիվս այլ դրույթների:

– **«Թափոնների մասին» օրենք (2004թ., վերջին փոփոխությունը՝ 2015թ.)**

Օրենքը կարգավորում է մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության հավաքագրման, տեղափոխման, պահպանման, մշակման, ծավալների կրճատման և կանխարգելման հետ կապված իրավատնտեսական հարաբերությունները: Օրենքը սահմանում է թափոնների օգտագործման նպատակները, պետական քաղաքականության հիմնական սկզբունքներն ու ուղղությունները, պետական ստանդարտացման սկզբունքները, վիճակագրական տվյալների գույքագրումը և դրանց իրականացումը, դրանց կիրառման պահանջները և մեխանիզմները, թափոնների վերամշակման սկզբունքները, թափոնների ներկայացման պահանջները, պետական

մոնիթորինգի ենթակա թափոնների քանակը կրճատելուն ուղղված միջոցառումները, ներառյալ բնական ռեսուրսների օգտագործման վճարները, ինչպես նաև թափոնների օգտագործման հետևանքով իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից մարդու առողջությանը և շրջակա միջավայրին պատճառված վնասների փոխհատուցումը, ինչպես նաև պահանջները, պետական մոնիթորինգը և օրենսդրական խախտումները: Օրենքը սահմանում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների՝ որպես իրավաբանական և ֆիզիկական անձանց, իրավունքներն ու պարտականությունները:

- **«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենք (2014, վերջին փոփոխությունը՝ 2023 թվականին) և ԵՆԲ բնապահպանական ու սոցիալական չափորոշիչներ**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՇՄԱԳՓ) օրենքը (ՇՄԱԳՓ) ապահովում է նախատեսված գործունեության և հայեցակարգերի պետական փորձաքննության անցկացման և կիրառման իրավական հիմքը, ինչպես նաև ներկայացնում է Հայաստանում տարբեր նախագծերի և գործունեության համար շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳՓ) գործընթացի ստանդարտ քայլերը: Նախատեսված գործունեությունը դասակարգվում է երկու կատեգորիայի, որոնք արտացոլում են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման տարբեր մակարդակներ՝ ըստ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների ծանրության: Օրենքը ներառում է դրույթներ, որոնք անմիջականորեն կապված են հանգստի և զբոսաշրջության ոլորտի հետ: Մասնավորապես, 3-րդ գլուխը՝ «Փորձաքննության ենթակա գործունեություն», թվարկում է ՇՄԱԳ-ի ենթակա նախատեսված գործունեության տեսակները: Նախնական գնահատման դիմումի կազմի պահանջները ներկայացված են սույն տեխնիկական առաջադրանքի Հավելված 1-ում:

3.4. Խորհրդատուի գործունեության շրջանակը

- Այս առաջադրանքի շրջանակներում մանկապարտեզների համար մանրամասն նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստում:
- Առաջարկվող լուծումների, նախագծերի համապատասխանության ապահովումը Հայաստանի Հանրապետության գործող շինարարական նորմերին և տեխնիկական պահանջներին, Պատվիրատուի պահանջներին, Եվրոպական ներդրումային բանկի պահպանության քաղաքականությանը, ներառյալ շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարման շրջանակը, վերաբնակեցման քաղաքականության շրջանակը և շրջակա միջավայրի կառավարման հատուկ պլանները:
- Տարածքի գեոդեզիական, երկրաբանական, տեղագրական և կադաստրային հետազոտությունների անցկացում, համապատասխան փաստաթղթերի մշակում:
- Տեղում այցելությունների կատարում՝ էներգետիկ աուդիտում ներկայացված տվյալները ստուգելու և ցանկացած հնացած տեղեկատվություն, ինչպիսիք են էներգետիկ հաշվարկները կամ էներգետիկ աուդիտի ավարտից հետո իրականացված միջամտությունները, թարմացնելու համար:
- Օրենքով սահմանված կարգով նախագծերի համաձայնեցում բոլոր լիազոր(շահագրգիռ) մարմինների և մատակարար կազմակերպությունների հետ:

- Անհրաժեշտության դեպքում համապատասխան գրավոր հարցման իրականացում ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ՝ մանկապարտեզների կառուցման նախագծի՝ ՇՄԱԳ փորձաքննություն անցնելու վերաբերյալ: Գրավոր հարցման/պատասխանի ներկայացում պատվիրատուին: Հարցման շրջանակում պետական վճարի /15.000 ՀՀ դրամ/ իրականացում՝ անհրաժեշտության դեպքում: ՇՄԱԳ-ի անցկացումը /անհրաժեշտության դեպքում/ գտնվում է Խորհրդատուի պարտավորությունների շրջանակում:
- Տեխնիկական պայմանների, ելակետային տվյալների, նախագծման և շինարարության համար անհրաժեշտ, ՀՀ օրենքով սահմանված, այլ փաստաթղթերի ձեռքբերման և ներկայացման համար օժանդակում Պատվիրատուին:
- Շինարարության ընթացքում հեղինակային հսկողության իրականացում:

Խորհրդատուն պարտավոր է.

a. Նախագծման փուլում

Հիմնվելով Պատվիրատուի կողմից տրամադրված տեխնիկական բնութագրի վրա՝ ապահովել բոլոր պահանջները, ներառյալ՝

- Նախագծային առաջադրանքի մշակման ընթացքում օժանդակել Պատվիրատուին և տրամադրել անհրաժեշտ տեղեկություններ նախատեսվող կառույցին ներկայացվող նորմատիվ պահանջների վերաբերյալ:
- Մասնակցել Պատվիրատուի կողմից կազմակերպվող ուսուցողական և տեղեկատվական բնույթի դասընթացներին:
- Մասնակցել և աջակցել Պատվիրատուին ՀՀ օրենսդրության համաձայն նախագծի վերաբերյալ կազմակերպվելիք հանրային լսումների աշխատանքներին:
- Տեղում ստուգել տրամադրված տեխնիկական պայմանների և այլ ելակետային տվյալների ճշգրտությունը և դրանց համապատասխանությունը նախագծային պահանջներին:
- Կատարել մանրամասն չափումներ և նախագծման նախապատրաստում համապատասխանաբար՝ հիմնվելով յուրաքանչյուր շենքի իրական չափսերի վրա:
- Մշակել առաջարկվող լուծումների մանրամասն գծագրեր, ներառյալ, բայց չսահմանափակվելով դրանով, շենքի պատերի ջերմամեկուսացումը, ջեռուցման, օդափոխության, տաք և սառը ջրամատակարարման, գազամատակարարման, էլեկտրամատակարարման, ներքին և արտաքին լուսավորության համակարգերը:
- Մշակել սեյսմիկ արդիականացման նախագծային փաստաթղթեր՝ համաձայն սեյսմիկ հետազոտության արդյունքների:
- Ապահովել նախագծային աշխատանքների իրականացումը՝ պայմանագրով սահմանված ժամանակացույցին համապատասխան:
- Ապահովել առաջարկվող լուծումների համապատասխանությունը ազգային շինարարական նորմերին, տեխնիկական կանոնակարգերին և տեխնիկական բնութագրերին (ներկայացված են որպես այս տեխնիկական առաջադրանքի հավելվածներ) :

- Շենքերի նախագծեր մշակելիս պահպանել շենքերի վերակառուցման համար կիրառելի սեյսմիկ դիմադրության նորմատիվ պահանջները :
- Հաշվի առնելով Պատվիրատուի դիտողությունները և մեկնաբանությունները՝ նախագծում կատարել համապատասխան փոփոխություններ:
- Հաշվի առնել նախագծի փորձաքննությունների (բնապահպանական, հակահրդեհային, տեխնիկական անվտանգության, պարզ և այլն) դիտողություններն ու առաջարկները և անհրաժեշտության դեպքում կատարել համապատասխան փոփոխությունները:
- Հաշվի առնել նախագծի վերաբերյալ միջազգային փորձագետների (եթե կան) մեկնաբանություններն ու առաջարկությունները և անհրաժեշտության դեպքում կատարել համապատասխան ճշգրտումներ:
- Վերջնական նախագիծը համաձայնեցնել շահագրգիռ կողմերի (համայնքի ղեկավարի, լիազորված (շահագրգիռ) մարմինների հետ, մատակարար կազմակերպությունների և այլն) հետ՝ համաձայն ՀՀ օրենսդրության:
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում պատրաստել և բնապահպանական պետական փորձաքննության ներկայացնել նախագծի բնապահպանական ազդեցությունների վերաբերյալ նախնական գնահատման հայտը (անհրաժեշտության դեպքում):

բ. Հեղինակային հսկողության ընթացքում (Հեղինակային հսկողությունն իրականացվում է համաձայն ՀՀՇՆ 13-04-2025 «Քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական գործունեության տեսակներին համապատասխան քաղաքաշինական գործունեության օբյեկտներում իրականացվող աշխատանքների և ծառայությունների մատուցման գործելակարգեր և պատասխանատու մասնագետների մասնագիտական բնութագրեր» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերի):

Շինարարության փուլում նախագծային փաստաթղթերի հեղինակը պետք է վերահսկի շինարարական աշխատանքների համապատասխանությունը նախագծային փաստաթղթերին:

Հեղինակային հսկողության գործընթացները ներառում են հետևյալը.

- Մասնակցել Պատվիրատուի կողմից կազմակերպվող ուսուցողական և տեղեկատվական բնույթի դասընթացներին :
- Մասնակցել շենքի առանցքների և պարագծի նշահարման գործընթացին:
- Կազմակերպել տեղային այցելություններ՝ համաձայն Պատվիրատուի հետ համաձայնեցված ժամանակացույցի, ամսական առնվազն **երկու (2) անգամ** և ապահովել իր անձնակազմի ներկայությունը՝ ըստ նախատեսվածի:
- Անհրաժեշտության դեպքում, ըստ Պատվիրատուի պահանջի, ժամանակացույցից դուրս այցելել շինհրապարակ::
- Ստուգել ընթացիկ և ավարտված աշխատանքների համապատասխանությունը նախագծին:
- Շինարարության ընթացքում անհրաժեշտ խորհրդատվություն տրամադրել Պատվիրատուին և Կապալառուին:

- Պատշաճ կերպով վարել հեղինակային հսկողության գրանցամատյանը, գրանցել բոլոր հայտնաբերված շեղումները և տալ հրահանգներ դրանց վերացման համար:
- Պատվիրատուին ներկայացնել հեղինակային հսկողություն իրականացնող աշխատակիցների ցանկը՝ նշելով թիմի ղեկավարին:
- Վերացնել շինարարության ընթացքում հայտնաբերված ցանկացած նախագծային թերություն: Արագորեն լուծել շինարարության ընթացքում առաջացող նախագծային խնդիրները՝ համաձայնեցնելով դրանք Պատվիրատուի հետ:
- Նախագծային լուծումներից ցանկացած շեղում գրանցել շինարարության ընդհանուր գրանցամատյանի համապատասխան բաժնում՝ համապատասխանաբար տեղեկացնելով Պատվիրատուին:
- Գրավոր տեղեկացնել Պատվիրատուին հայտնաբերված թերությունների և շեղումների մասին՝ ներառյալ անվտանգության կանոնների պահպանման անհամապատասխանությունը:
- Մասնակցել ավարտված շինարարական աշխատանքների հանձնման գործընթացին:
- Անմիջապես տեղեկացնել Պատվիրատուին և ստանալ նրա համաձայնությունը ժամանակացույցի կամ նախկինում համաձայնեցված լուծումների ցանկացած անհրաժեշտ փոփոխության դեպքում:
- Վավերացնել շինարարության ընթացքում կազմված ծածկված աշխատանքների և շինարարության ավարտական ակտերը, իսկ մերժման դեպքում գրավոր ներկայացնել Պատվիրատուին մերժման հիմնավորումը:
- Եթե հայտնաբերվում են շենքերի և կառույցների կայունությանը և հուսալիությանը սպառնացող որևէ թերություն, կամ նախագծից անթույլատրելի կամ էական շեղումներ (որոնք կարող են հանգեցնել շինարարության ծախսերի կամ ժամկետների էական աճի), ապա **երկու (2) օրվա ընթացքում գրավոր տեղեկացնել Պատվիրատուին :**
- Հեղինակային հսկողության պայմանագրով նախատեսված յուրաքանչյուր առաջադրանքի կատարման վերջնական հաշվետվություն է հանդիսանում պատշաճ կերպով լրացված հեղինակային հսկողության մատյանը, որը Հեղինակային հսկողը պետք է ներկայացնի պատվիրատուին այդ առաջադրանքով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտական ակտի ստորագրումից հետո, **հինգ (5) օրվա ընթացքում:**
- Ցանկացած ծրագրի շինարարության ընթացքում, որպես ընթացիկ հաշվետվություն, յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո՝ հաջորդող ամսվա մինչև ամսի 5-ը, Հեղինակային հսկողը Պատվիրատուին պետք է ներկայացնի հեղինակային հսկողության հաշվետվություն, որտեղ պետք է արտացոլված լինի հաշվետու եռամսյակում կատարած իր այցելությունները, իր աշխատանքները և այցելություններին մասնակցած մասնագետները:

Հետևյալ բաժինները սահմանում են նախագծային փաստաթղթերի մշակման համար նախատեսված փուլերը և մանրամասն ժամանակացույցը:

3.5. ՓՈՒԼ I

Թիվ 3, թիվ 73 և թիվ 120 մանկապարտեզների տարածքների երկրաբանական հետազոտություններ, տեխնիկական առաջադրանքին վերաբերող փաստաթղթերի ուսումնասիրություն և Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի (ԲՍԿՊ) **երկու (2) տարբերակի կամ առանձին ԲՍԿՊ-ի մշակում:**

ՓՈՒԼ I-ի տևողությունը սահմանվում է ծառայությունների մատուցման մեկնարկից հետո երեսուն (30) օրացուցային օր:

Նախագծային փաստաթղթերի հեղինակը պետք է Պատվիրատուին ներկայացնի հետևյալ փաստաթղթերը հաստատման համար.

- Գեոդեզիական հանույթները, UTM (միջազգային) կոորդինատային համակարգով, ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական հետազոտությունները, իրավիճակային հատակագծերը, տարածքի գլխավոր հատակագիծ՝ անհրաժեշտ հատույթներով և փովածքներով, երկրաբանական հետազոտությունների արդյունքներ՝ համաձայն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջների:
- Կադաստրային փաստաթղթերի ուսումնասիրություն:
- Պատմամշակութային հուշարձանների, դրանց բուֆերային գոտիների և նախագծի տարածքի մոտակայքում գտնվող ազգային կանոնակարգի համաձայն հատուկ խնամքի ենթակա ցանկացած կառույցի համառոտ նկարագրությունը:
- Նախագծի տարածքի սահմաններում գտնվող սեփականաշնորհված տարածքների և կառույցների նույնականացում և նկարագրություն:
- Վերանորոգման ենթակա տարածքների, կառույցների ցանկի և դրանց ծավալների պարզաբանում: **Ինչպես նշվել է նախկինում, այս տարածքները պետք է կամ համապատասխանեն EAP-ին, կամ հստակորեն հիմնավորված լինեն EAP-ից որևէ շեղման հայտնաբերման դեպքում:** Բացի այդ, պետք է ավելացվեն հետևյալ համապարփակ աղյուսակները:

Տարածքներ	Վերանորոգումից առաջ (մ²)	Վերանորոգումից հետո (մ²)
Զեռուցվող տարածք		
Զջեռուցվող տարածք		

Էներգաարդյունավետության չափանիշ	Շենքի տարրերի ընդհանուր մակերեսը (մ²)	Տարածքը ենթակա է վերանորոգման՝ վատ ջերմամեկուսացման պատճառով (մ²)	Վերանորոգման ենթակա տարածք՝ շենքում լրացուցիչ տարածքների ներառման պատճառով (մ²)	Վերանորոգման ենթակա ընդհանուր մակերեսը (մ²)
Արտաքին պատի մեկուսացում				
Արտաքին տանիքի մեկուսացում				
Ներքին առաստաղի (ջեռուցվող)				

տարածքների դիմաց) մեկուսացում				
Զջեռուցվող տարածքների պատերի ջերմամեկուսացում				
Հողին նայող պատերի մեկուսացում				
Հողի առջևի հատակի մեկուսացում				
Արտաքին պատուհանների փոխարինում				
Արտաքին դռների փոխարինում				

- վերականգնվող էներգիայի համակարգերի (ֆոտովոլտային համակարգ և արևային կոլեկտորներ) հետ կապված միջամտության հնարավոր հզորության հիմնավորում :

Բացի այդ, պետք է ավելացվի համապարփակ աղյուսակ:

Էներգաարդյունավետության չափանիշ	Յուրաքանչյուր մոդուլի տեսակը, քանակը և հզորությունը (կաթսաներ, օդորակիչի սպլիտ միավորներ, վերականգնիչներ) վերանորոգումից <u>առաջ</u>	Վերանորոգումից <u>հետո</u> յուրաքանչյուր մոդուլի տեսակը, քանակը և հզորությունը (կաթսաներ, ֆոտովոլտային և արևային կոլեկտորային վահանակներ, օդորակիչ սպլիտ միավորներ, վերականգնիչներ):	Ընդհանուր հզորություն (կՎտ)	Արդյունա- վետություն ² (%)
Նոր ջեռուցման համակարգ				
Ֆոտովոլտային համակարգ				
Արևային կոլեկտորներ				
Օդորակիչի սպլիտ միավորներ				
Օդափոխման համակարգի տեղադրում			-	

- Լուսավորության ուսումնասիրություն՝ օգտագործելով համապատասխան թվային գործիքներ և համապատասխան լուսավորության ստանդարտներին, ինչպիսին է

²ջերմության վերականգնում օդափոխության համակարգի բարելավման դեպքում

EN 12464-ը, ինչպես նշված է տեխնիկական բնութագրերում:

- Տեխնիկական առաջադրանքի համաձայն նախատեսված աշխատանքների ցանկի պարզաբանում :
- Հաստատված նախնական նախագծի հիման վրա ճարտարապետական և նախագծային լուծումների հստակեցված գծագրեր:
- Կառուցվածքային լուծումների սխեմատիկ նախագծում՝ հիմքերի և հարկերի հատակագծեր, հատվածներ, հատակագծեր և այլն:
- Այլ ճարտարապետական և շինարարական նախագծեր, որոնք կապահովեն առաջարկվող լուծումների ամբողջական պատկերացում:
- Ներկայացված նյութերը պետք է համաձայնեցվեն Պատվիրատուի հետ և լրացվեն համապատասխան բացատրական նշումներով:

3.6. ՓՈՒԼ II-ի նկարագրությունը

Հաստատված նախնական նախագծի հիման վրա թիվ 3, թիվ 73 և թիվ 120 մանկապարտեզի աշխատանքային նախագծերի մշակում

ՓՈՒԼ II-ի տևողությունը սահմանվում է հարյուր ութսուն (180) օրացուցային օր:

Խորհրդատուն պետք է Պատվիրատուի հաստատմանը ներկայացնի թիվ 3, թիվ 73 և թիվ 120 մանկապարտեզների նախագծերը՝ ներառելով նախորդ բոլոր դիտարկումները, համաձայն հետևյալ բաժինների.

Աշխատանքային նախագծերի մշակում՝ համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 128-Ն հրամանի:

- Ընդհանուր բացատրագիր,
- Գլխավոր հատակագիծ,
- Հատակագծեր բոլոր մակարդակների համար, ներառյալ նկուղային և տեխնիկական հարկերը, ցույց տալով կոնստրուկցիաների բոլոր տարրերը (երկաթբետոնե կառուցվածքային տարրեր, մետաղական կառուցվածքներ, մետաղական կոնստրուկցիաների մանրամասներ, փայտե կառուցվածքներ և այլն),
- Շենքի ճակատի բոլոր հիմնական տարրերի կտրվածքների գծագրերը՝ տանիքածածկի, առաստաղի, արտաքին պատերի, դռների և պատուհանների, նկուղի հանգույցները և միացումները,
- Շենքի պատերի ջերմամեկուսացման և բացվածքների փոխարինման համար առաջարկվող տեխնիկական լուծումները (ներառյալ գծագրերը), ինչպես նաև ջերմամեկուսացման իրականացման և պատուհանագոգերի տեղադրման հրահանգները, որոնք պետք է համապատասխանեն էներգետիկ աուդիտի զեկույցում սահմանված եզրակացություններին և առաջարկություններին (որոնք պետք է տրամադրվեն հեղինակին) կամ պատշաճ կերպով հիմնավորված լինեն, եթե առաջարկվում են EAR-ից որևէ շեղումներ: Բացի այդ, պետք է ավելացվի համապարփակ աղյուսակ:

Շենքի պատյանի ջերմամեկուսացում				
Էներգաարդյունավետության չափանիշ	Մեկուսիչ նյութ	Մեկուսացման հաստությունը (սմ)	Մեկուսացման ջերմահաղորդականություն (Վտ/մԿ)	Շինարարական տարրի ընդհանուր Ս-արժեքը (Վտ/մ² Կ)
Արտաքին պատի մեկուսացում				
Արտաքին տանիքի մեկուսացում				
Ներքին առաստաղի (չջեռուցվող տարածքների դիմաց) մեկուսացում				
Չջեռուցվող տարածքների պատերի ջերմամեկուսացում				
Հողին նայող պատերի մեկուսացում				
Հողի առջևի հատակի մեկուսացում				
Բացվածքների փոխարինում				
Էներգաարդյունավետության չափանիշ	Շրջանակի նյութ	Ապակեպատման նյութ	Ընդհանուր Ս-արժեք (Վտ/մ² Կ)	
Արտաքին պատուհանների փոխարինում				
Արտաքին դռների փոխարինում				

- Արտաքին պատերի և հարակից բաղադրիչների մանրամասն գծագրերը, ինչպիսիք են ջրիոս խողովակները և ջրհորդանները՝ ներառյալ հակասառցապատման մալուխային համակարգի տեղակայմամբ, կախոցները, հեռահաղորդակցության ակսեսուարները և այլն, Գծագրերը պետք է համալրվեն համապատասխան հատակագծերով, ներառելով արևային ջրատաքացուցիչ համակարգերի խողովակաշարը,
- Կոյուղաջրերի և անձրևաջրերի ջրահեռացման միացումների կամ այլ համապատասխան ջրահեռացման լուծումների մանրամասն գծագրեր,
- ԶԳՄՕ (ջերմագազամատակարարման և օդափոխության) համակարգերի և դրանց ջերմամեկուսացման գծերի մանրամասն գծագրեր գծային սխեմայով, ներառյալ առնչվող հատակագծային լուծումները և կտրվածքները:
- Հողանցումների և շանթարգելների մանրամասն գծագրեր գծային սխեմայով,
- Ներքին և արտաքին լուսավորության մանրամասն գծագրերը գծային սխեմայով,
- Հակահրդեհային ազդարարման և հակահրդեհային ցուցանակների մանրամասն գծագրեր,

- Հրդեհաշիջման համակարգերի մանրամասն գծագրերը գծային սխեմայով,
- Տարհանման ուղիների մանրամասն գծագրերը գծային սխեմայով,
- Տարհանման ուղեցույց հանդիսացող նշանների՝ ներառյալ լուսաձայնային մանրամասն նկարագիրը,
- Ապակիների թաղանթապատման համար նախատեսված թաղանթի տեխնիկական նկարագիրը՝ հրդեհակայունություն, առաձգականություն, շահագործման տարիների տևողություն և այլն,
- Պարզագույն թաքստոցի, ինչպես նաև համապատասխան կահավորման, օդափոխման, ջրի և սանհանգույցի մանրամասն գծագրեր գծային սխեմայով,
